«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ ***Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթաքում***

Առարկա՝ ***Մաթեմատիկա***

Հետազոտող ուսուցիչ՝ ***Նաիրա Պետրոսյան***

Ուսումնական հաստատություն՝ ***«Չարենցավանի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ***

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- ***Ներածություն***
- ***Հետազոտության ընթացք***
- ***Եզրակացություն***
- ***Գրականություն***

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Այսօր աշխարհն արագընթաց փոխվում է, ինչի արդյունքում փոխվում են կրթությանը ներկայացվող պահանջները: Գիտելիքների այն շրջանակը, որը հաղորդվում է աշակերտներին դպրոցական դասընթացից, բավականին լայն է և օրեցօր ավելի է ընդլայնվում: Հետևաբար սխալ կլինի մտածել, թե այն բոլոր տեղեկությունները, որ ստանում են աշակերտները, ամբողջությամբ կպահպանվեն նրանց գիտակցության մեջ և կօգտագործվեն աշխատանքային հետագա գործունեության ընթացքում: Բայց այն արժեքները,որոնք կձևավորվեն երեխայի մեջ այդ ընթացքում, կմնան որպես կենսակերպ:

Երեխաների կրթության մասին խոսելիս մենք հաճախ օգտագործում ենք **արժեքային համակարգ** հասկացությունը և կարևորում ենք արժեքների ձեւավորումը մեր այսօրվա սերնդի մեջ: Ժամանակակից կյանքում մշակութային, քաղաքական, սոցիալական փոփոխությունների հետ մեկտեղ փոխվում են նաև անձի արժեքները, աշխարհընկալումները, վարքագիծը, ինչպես նաև աշխարհի, մարդկանց, բնության հետ հարաբերությունները: Հասարակությունում առկա արժեքները և նորմերը ձևավորվում են տարիների պատմական և մշակութային զարգացման ընթացքում, ինչն էլ վկայում է այն մասին, որ արժեքների ձևավորումը մշակույթի ազդեցությունն անմիջականորեն իր վրա կրող գործընթաց է:

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի հայկական դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը:

Հետազոտության նպատակը և **խնդիրները:** Հետազոտության հիմնական նպատակն է ներկայացնել և ուսումնասիրել հանրակրթական դպրոցներում արժեքային համակարգի ձևավորումը աշակերտների մեջ դասավանդման ընթացքում: Այդ նպատակների իրականացումը պահանջում է կոնկրետ խնդիրների լուծում, որոնք էլ ապահովում են աշխատանքի տրամաբանությունն ու կառուցվածքը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ

Մեր կրթական համակարգն պետք է հենվի ազգը բնութագրող գլխավոր հատկանիշների վրա: Դրանք են՝ հավատ, լեզու, հայրենիք և պետություն: Նշված տարողունակ գաղափարների և արժեքների ճիշտ ներդրումը կրթական ոլորտում կլինի այն ամուր և խորը հիմքը, որով կրթված ու դաստիարակված անձնավորությունն իրեն կզգա որպես ազգի մի մասնիկը՝ պատրաստ իրականացնելու սերունդների մեջ դարերով ձևավորված ազգային երազանքները:

Արժեքը աշխարհի յուրահատուկ ընկալումն է, որը ձևավորվում է ոչ միայն ձեռք բերված գիտելիքի և ինֆորմացիայի, այլև սեփական կենսափորձի հիման վրա: Արժեքը հնարավոր չէ ստանալ հեշտությամբ, այն պետք է վերապրել, անցկացնել քո միջով, զգալ ու գիտակցել:

Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ կրթության պետական չափորոշչում՝ որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ: Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողներին ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նշվում են արժեքները և դրանց ձևավորումը, որոնք պետք է տա դպրոցը : Սակայն արժեքային համակարգի ձևավորումն անհնար է պատկերացնել հասարակությունից, մարդկանց հետ շփումից զատված:

Արժեքների աշխարհը բազմազան է: **Արժեհամակարգը** մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, նյութական ,իմացական, կրոնական, սոցիալական, ազգային, մշակութային և համամարդկային արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Ուսումնական հաստատություններում ստացած մեր գիտելիքներն ու կարողությունները նույնպես արժեքներ են, որոնք կազմում են կրթական արժեքների մի մասը: Ժամանակակից ժողովրդավարական կրթական համակարգերը միտված են հենց դեպի արժեքներ. դրանց հիմնական խնդիրը ապագա քաղաքացու մեջ անհրաժեշտ արժեհամակարգի և արժեքային կողմնորոշման ձևավորումն է:

Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները:

Արժեհամակարգի ձևավորումը պահանջում է երկարատև, համբերատար և դժվարին աշխատանք՝ սկսած այն պահից , երբ երեխայի մոտ արդեն ի հայտ են գալիս որոշակի կարողություններ: Երեխան ***արժեք*** հասկացությունը ամբողջությամբ չի ընկալում: Այն պահից, երբ նա սկսում է զգալ վախ, սեր, անհանգստություն, վստահություն, ունենում է համագործակցելու, խաղալու, շփվելու ցանկություն, ձևավորվում են որոշ արժեքներ, որոնք պարտադիր չէ, որ դրսևորվեն հենց այդ պահին, սակայն այդ ամենը ժամանակի ընթացքում նստվածք է տալիս և մի օր կարտահայտվի նրա կատարած քայլերում: Դա մի գործընթաց է, որը չի սահմանափակվում միայն դպրոցի կամ ընտանիքի միջավայրում, այլ նաև փողոցում, ընկերական և հասարակության հետ շփումներում:

Ի՞նչ չափի դերակատարում ունի դպրոցը երեխայի մեջ արժեհամակարգ ձևավորելու գործում:Ուսուցումը դպրոցում հատուկ կազմակերպված պրոցես է,որը հարստացնում և ամրապնդում է աշակերտի նախնական գիտելիքները: Յուրաքանչյուր առարկայի դասընթացի հիմքում ընկած հասկացությունները, դրանց համակարգը, հարաբերությունը, կապերը, գաղափարները և, վերջապես, մեթոդները, որոնց օգնությամբ աշակերտները հետազոտում, համոզվում և յուրացնում են ուսումնական նյութը, նրա կառուցվածքային հիմնական տարրերն են: Դաստիարակությունն սկսվում է մարդկանց կրթելուց, նրանց՝ իրենց իրավունքների և ազատությունների մասին տեղեկացնելու միջոցով, ինչը կապահովի այդ իրավունքների իրագործումը և կամրապնդի այլ մարդկանց իրավունքների պաշտպանության ձգտումը: Իրականում դաստիարակության գործառույթը անհրաժեշտ է իրականացնել ոչ միայն խրատներ տալով, այլև յուրաքանչյուր ուսումնական առարկայի դասավանդման գործընթացում դաստիարակության բովանդակությունը կազմող արժեքների համակարգի հետևողական ձևավորմամբ: Դպրոց ավարտած անհատը պետք է կարողանա ոչ միայն իր ճիշտ դերն ու տեղը գտնել կյանքում, այլ նաև կայուն կրողը լինի ձևավորված արժեհամակարգի: Ուսուցիչը դասի ընթացքում ոչ միայն պետք է իրագործի ուսումնական նպատակը , այլև զուգահեռաբար կարևորի և իրականացնի թեմայի դաստիարակչական նպատակը: Հարկավոր է կարողանալ համատեղել երկուսն էլ ՝ դրանց համընթաց զարգացում տալով:

Շատ կարևոր է, որ դասը , ըստ յուրաքանչյուր թեմայի , ճիշտ պլանավորվի , և թեմայից ելնելով ՝ առանձնացվեն արժեքները և շեշտադրվեն տվյալ դասի ժամին: Դասապրոցեսը պետք է կազմակերպվի այնքան հմտորեն , այնպիսի վարպետությամբ, որ աշակերտը, որին հետաքրքիր չէ այդ թեման, երբևէ հարց չտա. ինչի՞ համար եմ

սովորում այս թեման: Թեմայի շուրջ խորը գիտելիքը գուցե հետաքրքիր չլինի և պետք էլ չգա աշակերտին, բայց այն արժեքները, որոնք շոշափվում են թեմայի դասավանդման ընթացքում, հարկ է , որ դառնան մնայուն և կյանքի համար անհրաժեշտ: Կարևոր է նաև ուսուցման ողջ գործընթացի ժամանակ պարբերաբար և հետևողականորեն անդրադառնալ ձևավորած արժեքներին , քանի որ դրանց ամրապնդումը սովորողի մեջ ժամանակատար գործընթաց է: Ի վերջո, ուսուցչի նպատակներից մեկն էլ այն պիտի լինի, որ ինքը դառնա ճիշտ արժեհամակարգով ձևավորված անհատների կերտողը:

Դասապրոցեսում ամեն օր աշակերտը առնչվում է հետևյալ խնդիրներին.

- ***Հաղորդակցական հմտությունների ձևավորում***:Գաղտնիք չէ, որ մաթեմատիկան մեծ ներուժ ունի՝ զարգացնելու անձի մտավոր,ստեղծագործական և հաղորդակցական կարողությունները: Այն առանձին պրոցես չէ, այլ իրականացվում է ամբողջ դասապրոցեսի ժամանակ աշակերտների անմիջական մասնակցությամբ. ուսուցիչը սովորեցնում է մտքերը ճիշտ ձևակերպել,տրամաբանորեն իրար շարունակող նախադասություններ կազմել, խոսքը հստակ և հակիրճ շարադրել: Աշակերտը պետք է կարողանա անկաշկանդ, ճիշտ հայերենով ձևակերպել իր մտքերը, հարգալից, ցածր տոնով արտահայտվել և այդ ամենը առօրյա կյանքում կիրառել: Այս գործընթացի գլխավոր խթանողն ու վերահսկողը ուսուցիչն է :

- ***Համագործակցային կարողությունների ձևավորում***. այստեղ շատ կարևոր է խմբային աշխատանքի դերը: Աշակերտները պետք է կարողանան իրենց դերակատարումն ունենալ խմբում, լինեն միմյանց լսող, հսկող, կոորդինացնող, ղեկավարող: Պետք է ձևավորվեն մեկը մյուսին լսելու, խմբի անդամների կարծիքները գնահատելու, քննարկելու և վերլուծական աշխատանք կատարելու հմտություններ: Փոխօգնությունը խմբային աշխատանքի կարևորագույն կետերից է, և այդ աշխատանքի ժամանակ աշակերտների մեջ կարող են ձևավորվել այնպիսի գեղեցիկ հատկանիշներ, ինչպիսիք են բարյացակամությունը, հարգալից վերաբերմունքը և հանդուրժողականությունը:

Շատ կարևոր է մաթեմատիկայի դասավանդման ընթացքում աշակերտների մեջ ձևավորել հանդուրժողակոնության հատկանիշը: Մաթեմատիկայի ուսուցման գործընթացը մշտապես ուղեկցվում է սխալվելու վտանգով,առանց որի հաճախ անհնար է լինում գտնել խնդրի լուծումը:Սխալվելը մեթոդական տեսակետից լիովին արդարացված գործողություն է:Հետևապես ուսուցիչը նախ ինքը պետք է հանդուրժողականություն

դրսևորի աշակերտի սխալ մոտեցումների ու մտքերի հանդեպ և մղի նրան նոր լուծումներ փնտրելու: Չէ՞ որ կյանքը հետագայում ևս առաջադրելու է խնդիրներ, հաճախ սխալվելու վտանգներ: Ուստի հանդուրժողականությունը պետք է իմաստավորվի դեռևս դպրոցում, ամրակայվի սովորողի հոգում, որպեսզի դառնա նրա համար կենսական արժեք: Հանդուրժողականությունը առաջին հերթին ենթադրում է հարգանք մարդկային արժանապատվության նկատմամբ: Հանդուրժողականության ուսուցումը արժեքային կրթության տարր է, վերաբերմունքի ու դիրքորոշման բաղադրիչ:

Հանդուրժողականությունն անհրաժեշտ է թե՛ անհատների միջև հարաբերություններում, թե՛ ընտանիքում և թե՛ համայնքում: Մանկավարժները պետք է երեխաներին օգնեն սովորել տարբերակել հանդուրժող և անհանդուրժող վարվելակերպերը և գնահատել հանդուրժողականությունը:

Յուրաքանչյուր աշակերտի գիտակցության մեջ պետք է սերմանել այն, որ յուրաքանչյուր էակ օժտված է արժանապատվությամբ: Արժանապատվությունը սեփական <<Ես>>-ի արժեքի գիտակցումն է: Դա անձի վարքի, արարքների, իրավունքների գնահատականն է, անձի ինքնագնահատականը: Եթե արժանապատվությունը անձի հարգանքն է իր հանդեպ, ապա արդարամտությունը հարգանքն է ուրիշների հանդեպ: Արդարամտությունը այլոց ճշմարիտ, արդարացի գնահատումն է:

Եվ այս առումով առավել քան կարևոր է մատաղ սերնդին սովորեցնել թե՛ հարգել դիմացինին և թե՛ մղել նրան հարգելու իրեն և գնահատելու միմյանց հավասարության հիմքով: Ճշմարիտ հարգանքը չի կարող լինել շողոքորթության , վախի կամ կախվածության հետևանք :Այդ թվում նաև ուսուցիչ - աշակերտ հարաբերության մեջ: Այս հարցում օրինակ պետք է ծառայի ուսուցիչը իր վարվելաձևով: Ուսուցիչը պիտի ձգտի նրան, որ աշակերտը զգա և հասկանա՝ իրեն ոչ թե նսեմացնում են կամ մղում վախենալու,երբ դիտողություն են անում պահվածքի համար,այլ իրեն վերաբերվում են հարգանքով, սակայն անհրաժեշտ են համարում պարզելու և արդարամտորեն գնահատելու իրավիճակը :

Աշակերտական հարաբերություններում հաճախ են պատահում այնպիսի իրավիճակներ, երբ երեխաները խոսքը փոխարինում են ուժային մեթոդներով կամ ոչ ճիշտ, աշակերտին ոչ հարիր բառերով : Այսպիսի իրավիճակների հմուտ հարթումն ուսուցչի կողմից էլ ավելի է նպաստում երեխայի մեջ ճիշտ արժեքների ձևավորմանը: Այո՛, դպրոցում կյանքը ոչ միշտ է հեշտ երեխայի համար. նա զգում է և՛ ցավ, և՛

ուրախություն, ունենում է թե՛ դժվարություններ, թե՛ հաղթանակներ: Դպրոցում աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը և ընդունի դրանք: Տեղին է անցկացնել զրույցներ, քննարկումներ, նաև միջոցառումներ: Այդ ամենի պտուղը կլինեն իրական արժեքները, այլ ոչ թե թելադրված, անգիր արած, բայց աշակերտի համար ոչինչ չնշանակող ճշմարտությունները:

Ե՛վ հաղորդակցական հմտությունները, և՛ համագործակցային կարողությունները աշակերտներից պահանջում են միմյանց հանդեպ հարգալից վերաբերմունք, կիրթ , հայեցի խոսելաձև, որոնք ձևավորում են ճշմարիտ, բարոյական արժեքներ: Բարոյական արժեքները կազմում են մարդու արժեհամակարգի կարևորագույն մասը,և դրանց ձևավորումը դաստիարակության հիմնական խնդիրներից է, եթե ոչ հիմնականը: Բարոյական արժեքների ձևավորման գործում հումանիտար առարկաների հնարավորությունը անհամեմատ մեծ է, քանի որ հերոսության, հայրենասիրության, սիրո և բարոյական այլ որակների ձևավորման համար գրականությունը կամ պատմությունը կարող են ավելի պատկերավոր ներկայացնել նշված որակները կրող կերպարներին կամ դեմքերին: Կարևորում են նաև դերային խաղերը, նմանակումները, որոնք սովորողին հնարավորություն են տալիս զգալու տվյալ արժեքի կարևորությունն ու այն գնահատելու:

Բարոյական արժեքներից է սերը: Սերը մարդկային կյանքը, համակեցությունը կարգավորող, իմաստավորող հիմնական արժեքներից է: Սերը միայնությունից դուրս գալու, մյուս մարդկանց հետ միավորվելու ձգտումն է: Այն մոտեցնում է մարդկանց, արժևորում է նրանց կյանքը: Սերը ձևավորվում է ընտանեկան , կրոնական և ընկերային այլ միջավայրերում:

Աշակերտը դպրոց պետք է հաճույքով և ներքին պահանջով հաճախի: Այստեղ առաջին տեղում է ուսուցչի գործոնը: Ուսուցչի մոտեցումից և մատուցման ձևից է կախված աշակերտի մեջ ուսման հանդեպ սիրո արթնացումը: Աշակերտը պետք է գիտակցի ճշգրիտ գիտելիքների կարևորությունը, անհրաժեշտությունը, պետք է զգա այն արժեքների պահանջը , որոնք ձևավորվում են աշակերտի մեջ դպրոցական դասընթացի ժամանակ տարբեր առարկաներ ուսումնասիրելիս: Յուրաքանչյուր առարկայի դասավանդում իր ուրույն մոտեցումն ունի տվյալ արժեքը ձևավորելիս: Նյութը պետք է բացատրվի պատկերավոր, զգացմունքային, հաղորդելով տրամադրություն, նույնիսկ սինթեզելով երաժշտություն դասի պրոցեսին: Էլ ավելի գեղեցիկ,արդյունավետ կլինի, երբ սիրո արժեքը ներկայացվի՝ միջառարկայական

կապ ստեղծելով և սիրո մասին որևէ ստեղծագործություն ներառելով բնագիտական և մաթեմատիկա առարկաների ժամերին: Ինչ խոսք, այն իր բոլոր ձևերով արտահայտված է արդեն գրականության , երգ-երաժշտության, կերպարվեստի, ազգային երգ ու պարի դասաժամերին: Սերը որպես զգացմունք արտահայտվում է մարդու, բնության, երևույթի, նյութական առարկաների և հոգևորի արժեքների նկատմամբ: Սիրո զգացմունքը մարդու ներաշխարհի և արտաքին միջավայրի ներդաշնակությունն է, որը յուրաքանչյուր մարդու մոտ դրսևորվում է յուրովի և չի ենթարկվում որևէ չափանիշի:

Սիրելով դառնում ես բարի: Մաթեմատիկայի դասաժամերին փոխօգնությունը աշակերտների մոտ կարող է ձևավորել բարյացակամություն. մեկի մոտ առաջանում է դասընկերոջն անշահախնդիր օգնություն ցույց տալու, մյուսի մոտ՝ երախտագետ լինելու զգացողություն : Դասի թեմայից ելնելով՝ քննարկվող իրավիճակային հարցերով կարող ենք ներկայացնել բարու և չարի ճիշտ գնահատումը: Կինոդիտումների, պատմվածքի ընթերցումից հետո քննարկումների արդյունքում երեխաների մեջ ձևավորվում է այն հատկանիշը, որ նմանօրինակ իրավիճակներում իրենք էլ վարվեն բարի կերպարի նման : Բարու դրսևորումը անմիջապես երևում է երեխաների շփումից, միմյանց հանդեպ վերաբերմունքից: Առավել ևս, երբ դասարանում լինում է որևէ խնդրով երեխա: Այսպիսի իրավիճակներում աշակերտը պետք է գիտակցի, որ ինքն իր դասընկերոջը ոչ թե պիտի խղճա, այլ պիտի հարգի և այնպիսի մոտեցում ցուցաբերի, ինչպես հավասարը հավասարին : Աշակերտը իր բարի վերաբերմունքը պետք է ցուցաբերի նաև դրսի միջավայրում՝ անծանոթ մարդկանց ,իրենից փոքրերի, իր հասակակիցների և իրենից մեծերի նկատմամբ: Յուրաքանչյուր մարդ իր բարոյական վարքը դրսևորելիս ելնում է բարոյական այն արժեքներից, որոնք նա կրում է: Դա պայմանավորված է նրանով , որ մարդը բարոյական արժեքները ընկալում է որպես պարտք և պարտականություն, որպես գործնականում իրականացման ենթակա գործողություն: Պարտքը և պարտականությունը պատասխանատվության գիտակցման ունակություններ են: Դպրոց ոտք դնող երեխային ներկայացվում են նրա պարտականությունները որպես դպրոցականի , բայց նա ունի պարտավորություն նաև բնության հանդեպ, իր գոյությունը պահպանելու, իր սերունդը շարունակելու գործընթացում: Նա ունի պարտականություն իր ծնողների, հարազատների և իր հետ առնչվող մարդկանց հանդեպ, նաև հասարակության, ժողովրդի, պետության և հայրենիքի նկատմամբ:

Այս արժեքները մեկ իրավիճակով կամ մեկ խոսքով չեն ձևավորվում: Դրանք ամեն օրվա ընտանեկան, դպրոցական և հասարակության հետ հարաբերությունների համատեքստում են ձևավորվում:

Մաթեմատիկայի դասավանդման գործընթացը այս ուղղությամբ պահանջում է ավելի մեծ ու լրացուցիչ ջանքեր թե՛ ուսուցչի և թե՛ աշակերտի կողմից: Աշակերտին պետք է հանգեցնել այն գիտակցության, որ նա զգա և հասկանա իր բաժին պատասխանատվության չափը : Աշակերտը պիտի գիտակցի, որ իր անտարբերության, անբարեխղճության, անփութության յուրաքանչյուր դրսևորում կարող է ձախողել ուսումնական նյութի յուրացումը: Ուսուցիչները, ծնողները պետք է վստահեն նրան,բայց և վերահսկեն այդ գործընթացը, որը բավականին բարդ է: Դպրոցական յուրաքանչյուր օր և յուրաքանչյուր դաս աշակերտի համար այդ արժեքները դաստիարակելու մի քայլաշար է: Ամեն րոպե երեխան տեսնում, ընկալում, վերլուծում և ընդօրինակում է մի նոր բան՝ գնահատելով դրա և՛ լավ, և՛ վատ կողմերը: Վերցնում է իր ընկալմամբ ճշմարիտն ու անհրաժեշտը և դարձնում իրենը:

Պարտականությունները ներկայացնելուն զուգընթաց չպետք է մոռանանք երեխայի իրավունքների մասին: Դպրոցում աշակերտին ինչպես պարտականությունների, այնպես էլ իրավունքների մասին տեղեկացվում են յուրաքանչյուր տարի: Դպրոցում երեխան պետք է ազատ խոսքի, ազատ արտահայտվելու իրավունք ունենա: Չպետք է վախենա նույնիսկ ոչ ճիշտ միտք ու կարծիք հայտնելուց :Դրան պետք է նպաստի նաև ուսուցիչը իր վարած դասապրոցեսով:

Աշակերտը պետք է ճանաչի ու հնարավորինս ճիշտ գնահատի իրեն. ինքը բարի՞ է, թե՞ չար, ազնի՞վ է, թե՞ ստախոս, ժլա՞տ է, նախանձու՞մ է դասընկերոջ հաջողությանը, թե՞ ուրախանում է: Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը պետք է կարողանա ըստ ստեղծված իրավիճակի ներկայացնել , թե գրական կերպարը կամ պատմական հերոսը ինչպես է վարվել նման դեպքերում, նշի նրանց քայլերի դրական և բացասական կողմերը: Աշակերտը կլսի, կվերլուծի և կմտածի իր դիրքորոշման մասին՝ ինչպես կվարվեր ինքը, որն է ճիշտը, ազնիվը, բարին : Կարո՞ղ է արդյոք ինքը առճակատման գնալ հանուն ճշմարտության և ազնիվ քայլի ,արդյո՞ք իր կատարած յուրաքանչյուր արարքի շարժառիթը ազնիվ է:

Յուրաքանչյուր առարկայի դասավանդման գործընթացի հիմքում պիտի ընկած լինի մարդասիրության դաստիարակումը :

Ուսուցչի խնդիրը պիտի լինի աշակերտի մեջ ամրակայել այն գիտակցումը,որ մարդկային առաքինությունը բխում է ազատ կամքի արտահայտությունից և սեփական արժանապատվությունը հարգելուց:

Խիղճը և ամոթը մարդու բարոյական վարքի հիմնական ներքին կարգավորիչներն են: Խիղճը մարդու կատարած գործողություններն է իր պարտքի առաջ: Դրանցով է պայմանավորվում մեր գործողություններին տված մեր գնահատականը:

Իսկ ինչպե՞ս է նպաստում հանրակրթությունը այս արժեքների ձևավորմանը:

Երեխայի մեջ այն ձևավորվում է և՛ ընտանիքում, և՛ հասարակության մեջ, և՛ դպրոցում . նա անընդհատ առնչվում է լավ և վատ երևույթների մասին հնչած գնահատականների, լսում գովեստի կամ նախատինքի խոսքեր ՝ կա՛մ իր , կա՛մ իր դասընկերներից մեկին ուղղված , պատժի կամ խրախուսանքի արժանանում . այդ ամենը դաստիարակչական նշանակություն են ունենում. նա սկսում է տարբերակել՝ ինչն է ամոթ և անթույլատրելի, ինչպես վարվել,որ լինի խղճի մտոք: Երեխայի այս հատկանիշներին ուսուցիչը հանդիպում է ամեն վայրկյան՝ տեսնելով ամեն քայլը , լսելով խոսքը , ականատես դառնալով նրա վարքագծին: Դա կարող է պարզ դառնալ , օրինակ, դասապրոցեսի ժամանակ ՝ կախված նրանից, թե ինչպես կգնահատի աշակերտը պատմվածքի բացասական հերոսի քայլը կամ , ինչու՞ չէ, ընկերոջ սխալ քայլը: Պատրա՞ստ է արդյոք ինքը կանգնելու իր ընկերոջ կողքին անհրաժեշտության դեպքում , եթե անգամ նա սխալվել է, ձեռք մեկնել նրան և օգնել՝ ճիշտ ճանապարհին կանգնելու : Նման վարքագիծը կարող է լավագույնս նկարագրել նրա ամբողջ ներաշխարհը: Բնորոշիչ կլինի նաև այն, թե ինչպես կարծագանքի աշակերտը նախատինքին, հանդիմանությանը: Դրանից հետո պարզ կլինի,թե ունի՞ աշակերտը ամոթի զգացողություն:

Ժամանակ առ ժամանակ ուսուցիչը պետք է անդրադառնա այս կամ այն ոչ ճիշտ քայլին և քննարկի աշակերտների հետ: Պետք է լսի երեխաների մտքերն ու մոտեցումները, կառավարի կարծիքների բախումը, քննարկմանը տա ճիշտ ուղղություն:

Դպրոցում մաթեմատիկայի դասավանդման գործընթացը էլ ավելի է մեծացնում մարդու վերլուծական կարողունակությունները, ինչը իր հերթին հնարավորություն է տալիս ճիշտ գնահատելու և քննադատաբար վերաբերվելու սեփական

գործողություններին, ունենալու կայուն համոզմունքներ և չշեղվելու դրանցից:Այս ամենը կնպաստեն այն բանին , որ մարդու խիղճը լինի մաքուր:

Պատիվը ևս բարոյական արժեք է և մարդու արժանիքներից մեկը: Այն ևս ձևավորվում է փոքր տարիքից, իր գործունեությամբ, իր վարվելաձևից և մեծապես կախված է ստացած կրթությունից:

Դասավանդման գործընթացը կարևոր դեր ունի մտածողության, երևակայության, հիշողության, ուշադրության, կամքի և հոգեկան այլ արժեքների ձևավորման և զարգացման գործում: Իսկ այդ արժեքները նպաստում են յուրաքանչյուր մասնագիտության մեջ լավագույնս խորանալու և այն տիրապետելու գործընթացին և հետևաբար արժանանալու մեծ պատվի: Երեխաները , շատ հաճախ տեսնելով իրենց շրջապատի մարդկանց հանդեպ ցուցաբերված հարգանքն ու վաստակած պատիվը, որ ձևավորվել են ոչ միայն մարդկային,այլ նաև մասնագիտական որակների համար, փորձում են նմանվել նրանց, դառնալ այդ մասնագետը: Ուսուցիչը շատ խոհեմ ձևով պետք է ներկայացնի այն, որ պատիվը երկարատև լավ աշխատանքի, լավ դրսևորման արդյունքում է ձեռք բերվում: Եվ ուսուցիչը պետք է դառնա դրա վառ օրինակը:

Սովորողների արժեքային համակարգի տարրերից է նաև ազատության արժեքը: Ազատությունը սերտորեն կապված է անկախության արժևորման հետ: Երեխան ազատությա ն արժեքը զգում և պահանջում է դեռ մանկուց, բայց արդեն հասուն տարիքում հասկանում է, որ չի կարող ազատ լինել ամբողջությամբ՝ արտաքին հանգամանքներից ելնելով: Այդ գաղափարը պետք է ձևավորվի և արմատավորվի դպրոցական միջավայրում:

Ազատ լինելու արժեքի դրսևորումը ինչպե՞ս է արտահայտվում դպրոցում, ո՞րն է աշակերտի ազատությունը. ապրելու և մտածելու ազատություն, որոշում և վճիռ կայացնելու ազատություն, գործելու ազատություն. ահա իրական ազատությունը: Աշակերտը ազատ է իր մտածելու և միտքը վերարտադրելու մեջ: Այս գործընթացին նպաստում են նախ ընտանեկան դաստիարակությունը, ապա նաև դպրոցը և դասավանդման մեթոդները, որոնք նպաստում են մտածողության զարգացմանը բոլոր դասերին: Պետք է երեխային հասկացնել այն , որ ազատությունը մարդկային ցանկությունների բավարարում չէ. այն զուգորդվում է զսպվածության , որոշ դեպքերում նաև ինքն իրեն ինչ-որ բաներ արգելելու ունակության հետ: Եվ յուրաքանչյուր մարդ, լինելով ազատ և անկախ, պետք է պատասխան տա իր գործողությունների համար. ազատությունը ենթադրում է պատասխանատվություն :

Արժեք է նաև գեղագիտական ճաշակը, գեղագիտական դաստիարակությունը: Գեղագիտությունն ուսումնասիրում է գեղագիտական ապրումների և զգացմունքների ամբողջությունը, մարդու գեղագիտական հարաբերությունն իրականության հետ: Գեղագիտությունը ուսումնասիրում է ինչպես մարդու գեղագիտական զգացմունքները, ճաշակը, իդեալները, այնպես էլ բուն իրականության գեղագիտական կողմերն ու նրանց արտացոլումն արվեստում:

Երկրաչափությունը, բացի գործնական կիրառական հսկայական նշանակությունից, ունի նաև գեղագիտական զարգացման և քաղաքացիական դաստիարակման մեծ հնարավորություններ: Այն,որ տեսողական արվեստների հիմքում ընկած են երկրաչափական պատկերներն ու առնչությունները,վկայում է,որ երկրաչափական ձևերի՝ համաչափության, երկրաչափական պատկերների ներդաշնակ զուգորդման միջոցով արտահայտվում են գեղագիտական արժեքներ:

Գեղագիտական դաստիարակման գործում մեծ գործոն է ուսուցիչը իր կեցվածքով, խորհուրդներով, դասապրոցեսին օրինակներ բերելով, ցուցադրելով և ներկայացնելով գեղեցիկ արժեքներ, ներկայացնելով արվեստագետներին իրենց ստեղծագործություններով: Երեխան ավելի շատ վերցնում և հիշում է տեսնելով, քան լսելով, զգալով , շոշափելով, քան նկարագրելով: Ուստի անհրաժեշտ է հաճախել թանգարաններ, պատկերասրահներ, կինոթատրոններ, թատրոններ, ցուցահանդեսներ, մասնակից դառնալ բազմաբնույթ ֆորումների, քննարկումների, մրցույթների: Կարևոր է անցկացնել հատուկ դասեր, որտեղ կքննարկվեն նկարիչների գործերը, երաժիշտների ստեղծագործությունները ,կինոֆիլմեր և թատրոններ, նաև ազգային երգն ու պարը: Այսօր արդեն մեծ հնարավորություն է ընձեռված աշակերտներին համացանցով տեսնելու և տեղեկանալու այն բարձր արժեքներին, ինչը հետաքրքրում է իրենց: Այս և նմանատիպ ձևերով պետք է զարգացնել երեխաների գեղագիտական ընկալումը, պատկերացումները, համոզմունքները, կյանքում գեղեցիկը տեսնելու և գեղեցիկի օրենքներով արարելու կարողությունը: Նմանատիպ պահանջներով դասեր պետք է հաճախակի անցկացնել:Եվ մեր հետևողական աշխատանքը կտա ցանկալի արդյունք:

Եվ , վերջապես, ամենակարևորը ազգային արժեքային համակարգն է: Դպրոցում հայոց պատմության, գրականության դասավանդումը ամբողջությամբ բովանդակում է դաստիարակչական վիթխարի ներուժ, հայրենասիրություն և ազգային արժանապատիվ գոյության գիտակցում: Հայոց պատմության իմացությունը Հայաստանի Հանրապետության ապագա քաղաքացուն հնարավորություն կտա ուսումնառության

ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները, հայոց քաղաքակրթության դարավոր ավանդույթները, փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնելու հզորացման և բարգավաճման ուղին բռնած Հայաստանի անկախ պետությանը, պատկերացում կազմելու համաշխարհային պատմության մեջ Հայաստանի և հայ ժողովրդի զբաղեցրած տեղի ու դերի մասին: Հենց այս պատճառով է, որ կրթության զենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը: Ազգային մշակույթի, ազգային ավանդույթների պահպանումը ևս չափազանց կարևոր է երեխայի դաստիարակման հարցում : Մշակույթը մարդկային մտածողության ծրագրավորում է և փոխանցվում է սովորելու միջոցով: Մարդու ինքնությունը ձևավորվում է այն մշակութային միջավայրում, որի հերոսներին, խորհրդանիշները, ծեսերն ու արժեքներն ընդունում է մարդը: Դարերի ընթացքում ձևավորված հայկական մշակույթը հնարավորություն է տվել մշակելու որոշակի վարվելաձևեր , որոնք հատուկ են միայն հայ ազգին: Ուստի չպետք է վերցնենք օտար մշակույթ, որքան էլ այն այսօրվա սերնդին ավելի գերող լինի, խստագույնս պետք է պահպանենք մերը, հայկականը: Պատկերացում տանք մեր ժողովրդի կյանքի ու կենցաղի, ապրելակերպի ու ավանդույթների, վարքի ու բարքի մասին, հասկանալի դարձնենք,թե ինչպես են ապրել ու աշխատել մեր նախնիները , ինչպես են ընտանիք կազմել, սնվել ու հագնվել: Այս գիտելիքները սովորողներին կմոտեցնեն մեր ազգային արմատներին ու ակունքներին:

Ճանաչելի պիտի դարձնենք Հայաստան աշխարհն ու հայրենի բնօրրանը, բնապատմական և պատմամշակութային այն միջավայրը, որտեղ ապրել ու իր պատմական ուղին է անցել հայ ժողովուրդը:

Հասնենք այն բանին, որ Հայաստանի՝ իր ժողովրդի հարուստ պատմական փորձով զինված վաղվա քաղաքացին գիտակցի իր անմիջական մասնակցության անհրաժեշտությունը ազգային հիմնախնդիրների լուծման, անկախ պետականության կերտման , հայրենիքի բարգավաճման և վերածնության գործին:

Այս դեպքում ազգային մշակույթը կնշանակի անհատի մտագործելակերպ, լինելության, աշխարհի ընկալման և այդ աշխարհում իրեն գտնելու և դրսևորելու նրա կերպը:

Այսինքն՝ ազգային գիտակցությունը պետք է արծածվի դեռևս նախադպրոցական տարիքից այն չափով ,որը հասու է երեխային: Արդեն դպրոցական տարիքում պետք է

մանրամասն և ճիշտ ձևով անդրադառնանք ազգային մշակույթի, ազգային ավանդույթների պատմությանը և պետք է սերմանենք ազգային ինքնագիտակցություն:

Եվ շատ կարևոր է աշակերտներին բերել այն գիտակցության, որ առաջնահերթ է մայրենի լեզվի իմացությունը , նրա դերի և նշանակության գիտակցումը:Մայրենիի ճիշտ դրվածքը և իմացությունը բոլոր ուսումնական առարկաների յուրացման առաջին նախապայմանն է: Բայց այս խնդիրը միայն մայրենի լեզվի ուսուցիչներինը չէ: Յուրաքնչյուր առարկայի դասաժամ,այդ թվում՝ մաթեմատիկայի, պետք է միտված լինի ազգային արժանապատվության գիտակցմանը: Ազգային արժանապատվությունը սեփական ազգի արժանիքների, վաստակի, իրավունքների գիտակցումն է, ինքնահարգանքը՝ որպես ազգի ներկայացուցիչ:

Այստեղից էլ աշակերտների մոտ ձևավորվում է հայրենասիրությունը,որը մարդկային կարևոր առաքինություններից մեկն է: Աշակերտի մոտ պետք է ձևավորվի հայրենիքի պաշտպանության գործում սեփական դերի գիտակցումը:Հայրենասիրությունը արիություն է պահանջում, ռիսկ, կյանքի վտանգում, իր երկրի և իր ազգի համար նվիրյալ աշխատանք:Այս արժեքները էլ ավելի են արմատանում երեխաների մոտ պատմական գրքեր ընթերցելով, պատմավավերագրական ֆիլմեր դիտելով, նաև ազգային երգն ու պարը սովորեցնելով: Հարկավոր է ցույց տալ ազգային-ազատագրական պայքարի հերոսական դրվագները , հայ ժողովրդի խիզախ ու քաջարի զավակների անձնազոհ սխրանքները: Այն պետք է լինի հետևողական գործընթաց, թեկուզ պարտադրաբար :

Բազմամշակութային աշխարհում անհրաժեշտ է նաև ուսումնասիրել այլ ազգերի մշակույթը, պատմությունը, սովորել շատ լեզուներ: Դա թույլ կտա հարգալից և դիվանագիտական վերաբերմունք հանդես բերել տարբեր մշակույթների ու դրանց կրողների հանդեպ և էլ ավելի արժևորել քո ազգայինը: Կօգնի հասկանալ , որ հայերը բազմաթիվ այլ երկրներում հանդես են գալիս որպես մշակութային փոքրամասնություն: Ունենալով սփյուռք, ապրելով, կրթվելով և ստեղծագործելով տարբեր մշակութային միջավայրերում՝ հայ մարդը միշտ պահպանել է հայկական մտագործելակերպը, բայց և ունեցել է դրական միջմշակութային հաղորդակցության հմտություններ և հանդուրժողականություն: Եվ հայկական համայնքը բազմաթիվ երկրներում համարվել է ամենահարգված համայնքներից մեկը: Ահա այս ամենը պետք է տեղեկացնել, հասու դարձնել երեխաներին: Երեխան նաև ինքը պետք է գնահատի այդ աշխատանքը, հասկանա, զգա այդ ներուժը :

Յուրաքնչյուր առարկայի ուսուցման գործընթացում, ընդհանրապես դպրոցական պրակտիկայում հանդիպում ենք տարբեր տիպի դասերի, որոնք ունեն իրենց տարբեր հիմքերը, ուսումնադաստիարակչական նպատակը, դասավանդման իրենց բնութագրող կոնկրետությունը, նրբագեղությունն ու գեղեցկությունը: Սակայն ազգային արժեքային համակարգի ձևավորման գործում հատկապես կարևոր են հայոց պատմության ,հայ գրականության դասերը:

Հայոց պատմություն առարկայի ուսումնասիրման շնորհիվ ձևավորվում է ազգային դիմագիծ, պետականամետ մտածելակերպ ունեցող, հայ ժողովրդի և հայոց պետականության դերը համաշխարհային պատմության համատեքստում պատկերացնող, հայոց ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու անձ ու քաղաքացի: Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա, որ որպես հայ պետք է ապրի , աշխատի , ստեղծագործի, արարի իր հայրենիքում:

Ազգային արժեքների մեջ անգնահատելի է,անշուշտ, ընտանիքի դերը: Այն մարդկության կողմից պատմական երկարատև զարգացման ընթացքում ստեղծված մեծագույն արժեք է : Ընտանիքն է տվյալ ժամանակաշրջանի մշակույթի կրողն ու փոխանցողը: Հայկական ընտանեկան ավանդույթներն ու սովորույթներն ցայսօր օգնում են հայեցի դաստիարակություն տալ երեխային՝ նրա մեջ ձևավորելով ազգային ինքնագիտակցություն, հայրենիքը պաշտպանելու և այն սերունդներին ժառանգելու ոգի և կամք:

Երեխան ընտանիքում է լսում և սովորում մայրենի լեզուն, ճանաչում ընտանեկան ավանդույթները, գիտակցում, որ ինքը Հայ առաքելական եկեղեցու հետևորդ է , և կարևորում է ազգային սովորույթները:

Ընտանիքում է երեխան առաջին անգամ հաղորդակցվում մշակութային արժեքներին, յուրացնում, թե ինչպես պիտի պահի իրեն հասարակության մեջ,որոնք են վարքագծային ընդունելի նորմերը :

Յուրաքանչյուր սերունդ ունի իր կատարելատիպը, ըստ որի էլ չափվում են արժեքներն ու նպատակները: Սերունդները օղակ են անցյալի ու ապագայի միջև, և նրանց շնորհիվ և միջոցով էլ ապահովվում է տվյալ ժամանակաշրջանին բնորոշ արժեքների փոխանցումը հետագա սերունդներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այս հետազոտական աշխատանքում անդրադարձել ենք այնպիսի թեմայի , որը, անկասկած, շատ մեծ նշանակություն ունի յուրաքանչյուր հայ երեխայի դաստիարակման գործում: Արժեհամակարգի ձևավորման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն ուսումնական բոլոր առարկաները, ընտանիքը և հասարակությունը:

Աշխարհն իր ամբողջության մեջ արժեքների համակարգ է,որը գնահատվում է բարու և չարի, ճշմարիտի և ստի, գեղեցիկի և տգեղի, վեհի և ստորի, արդարի և անարդարի, ընդունելիի և մերժելիի տեսանկյունից:

Հենց այս պատճառով է ,որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը:

Որպես առաջարկություն՝նշենք՝ հարկ է, որ յուրաքանչյուր ուսուցիչ ամեն դասի թեմայի նպատակների մեջ պարտադիր ներառի նաև արժեհամակարգի ձևավորումը և հետևողականորեն իրականացնի այն:

Առավել ևս մեր օրերում անհրաժեշտ է կրթել և դաստիարակել այնպիսի սերունդ, որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց կտա իր մշակութային հարստություններն ու բարոյահոգեբանական արժանիքները:

Գոյություն ունեն համամարդկային անանց արժեքներ, որոնք կարգավորում են համայն մարդկության կենսագործունեությունը՝ որպես համընդհանուր նորմեր, չափանիշներ, բարոյական - արժեքային կողմնորոշիչներ:

Աշխարհը,որտեղ ապրում է մարդը, խելահեղ է, հակասական,սակայն աբսուրդի հաղթահարման և երջանկության հասնելու ճանապարհը համընդհանուր սերն է ու մարդասիրական բարոյականությունը, հավատը ճշմարտության հանդեպ:

Գրականություն

1. Հ.Ա.Միքայելյան,Բարոյական արժեքները և մաթեմատիկայի ժամերը,Երևան, 2011

2.Գիտամեթոդական վերլուծական ամսագիր, Մարդ և հասարակություն, N 5,2013

3. Գիտամեթոդական վերլուծական ամսագիր,Մանկավարժություն , N 2,2017

4. Գիտամեթոդական վերլուծական ամսագիր,Մաթեմատիկան դպրոցում, N5 ,2012, N4 ,2016, N3 ,2016

5.Ձեռնարկ ավագ դպրոցի համար 10-12-րդ դասարաններ, Արժանապատվություն,հանդուրժողականություն, Երևան ,2014

6.Ս. Հակոբյան,Երկրաչափություն.ուսուցչի ձեռնարկ,Երևան,2011

7. Համացանց